Հրանտ Մաթևոսյան

Էս ժողովրդի, էս կյանքի մարգարեն էի լինելու

- Մենք արդեն պայմանավորվել էինք այս զրույցի համար, երբ «Արար» թերթում կարդացի Հովհաննես Երանյանի հարցազրույցը քեզ հետ: Եվ նախքան մեր զրույցն սկսելը, ինձ թվում է, փոքրիկ ճշգրտում անհրաժեշտ է: Ինձ, որպես ընթերցողի, այդ հարցազրույցի մեջ վիրավորեց երկու բան. մեկը՝ «կսմիթները», մյուսը՝ «Ձեր ստեղծագործության մեջ շատ բաներ հնացել են» պնդումը: Եվ երկուսի հետ էլ դու համաձայնվում ես:
- Եթե մամուլի, խոսքի ազատություն լիներ, կայսրությունը չպիտի փլուզվեր: Ձգայուն մարդկանց, գրողների, պոետների հոգիներում, աչքի առաջ երկրի փլուզումը ծավալվում էր, իսկ նրանք չէին կարող ճչալ, ծղրտալ, էդ գրոտեսկային իրականությանը գրոտեսկային էլ պատասխան տալ: Եվ որպես վրիպած տողեր, վրիպակի տպավորություն թողնող տողեր, արտահայտություններ, ստեղծագործություններ էդ ժամանակվանից մնացել են, բայց, կրկնում եմ, որպես վրիպանք: Պարույր Սևակն ասում էր՝ լավ է լինել հմուտ դարբին, քան ոսկերիչ...
Իսկապես, դարբնի տեղ էր, դարբնելու, կռելու, նոր ժամանակների նոր աստվածություններ ստեղծելու տեղ էր, այնինչ գրողներին վերապահված էր ուղղափառ մարքսիզմի լուսանցքում ընդամենը լուսանցազարդեր անողի տեղ: Եվ էն բոլոր հաջողությունները, որ սովետական գրականությունն ունեցավ, վրիպակի տպավորություն էին թողնում: Այլապես, եթե այսպես չի, եթե այլ պայմաններ լինեին, եթե գրականությանը վերապահեին ոչ թե կուսակցության օգնականի դեր, այլ կուսակցությանը տային գրականության օգնականի դեր, երբեք չպետք է առաջանար երկրի պատմության մեջ էն այլանդակ երևույթը, որ կոչվեց այլախոհություն: Եվ մտավորականությունը չպետք է անցներ

ընդհատակ, լավագույն դեպքերում՝ խոսեր կսմիթներով, շատ դեպքերում էլ, առճակատվելով, հայտնվեր արտասահմանում: Ինչ որ է, մեղքը իրենց վիզը: Ժամանակին երկրի որդու ճիչը խլացրին, և ահա եղավ էն, ինչի վկաներն ենք մենք այսօր: Այլապես՝ դարերի մեջ իրենց հանճարի վերսլացումներն ունեցած ազգերը, որ բազմաթիվ անգամներ վկայել էին, թե կարող են իրենց մշակույթներով համաշխարհային գագաթներ բարձրացնել, հայտնվել էին մուրացկանի, հայցվորի, Արևմուտքի առջև մշակութային ենթակայի դերում: Եվ էն մեծերը, որ պետք է ծնվեին այստեղ, ծնվել էին Արևմուտքում: Եվ պատահականություն չի, որ ընթերցողը իր սեփական Մարկեսին երկրպագելու փոխարեն, ահա, դառնում էր Արևմուտքի մարկեսների երկրպագուն: Այսինքն՝ մենք անհավասար վիճակի մեջ էինք դրված Արևմուտքի մեր գրչակիցների հետ: Մեր ձեռքերը բռնել էին, իսկ նրանք ազատության պայմաններում իրենց գրականությունն ստեղծում էին, և նրանց գրականությունը գալիս էր կիսատ խոսքի մեր գրականությունը ընթերցողի դեմից վանելու և մեր փոխարեն նստելու մեր ազգի ընթերցողի առջև: Էնպես որ, այդ տղայի դիտողությունը ճիշտ է: Վրիպումներ, անշուշտ, դարձյալ վրիպակի տպավորություն թողնելով, եղել են:
- 1960 թվականին «Սովետական գրականություն» ամսագրում տպագրվեց քո «Ահնիձոր» ակնարկը: Գրականագետներ Լևոն Հախվերդյանը և Սուրեն Աղաբաբյանը «Գրական թերթում» ողջունեցին քո՝ գրողիդ մուտքը գրականություն, և ապա...
- Ինչքան հիշում եմ, նախաձեռնությունը Լևոն Հախվերդյանինն է եղել: Երևի նա իր նախաձեռնությամբ համակել էր նաև Սուրեն Աղաբաբյանին, որ գրականության համար այրվող մարդ էր, կյանքի բոլոր ցավերը մի գրողի չափ ապրում էր: Եվ իմ ակնարկը, ահա, նրանց դուր էր եկել: Իրենք ազնիվ էին ու մինչև վերջ էլ ազնիվ մնացին, մանավանդ Սուրեն Աղաբաբյանը՝ հետագայում ինձ պաշտպանել փորձելու, նորից ճանապարհ բացելու իր ճիգերով: Եթե հրապարակումների մեջ այդ երկու անունը բացահայտվեց, հետո ստորություններ էլ բացահայտվեցին... Բայց իմ սերունդն ինձ պաշտպանում էր: Տղաներ, աղջիկներ էին մոտենում, որպես հերոսի էին մոտենում: Ես էլ ինձ արժանավայել պահեցի նրանց սիրո առաջ: Չէր կարելի ետ քաշվել, պետք է շարունակեի, մանավանդ որ իմ, էսպես կոչված, մեծ գյուտը արել էի: «Ահնիձորում» մի փոքրիկ գլուխ կա՝ «Արջը»: Էդտեղ ես առաջին անգամ հասկացա, որ՝ մենք ենք, մեր արջը, երրորդը այստեղ գործ չունի: Էստեղից առաջացավ «Մենք ենք, մեր

սարերը», որ գրեթե միաժամանակ գրեցի, 1960-61 թվերին, երբ 25 տարեկան էի: Դուք այստեղ գործ չունեք, ձեր քիթը մի խոթեք մեր գործի մեջ, երբ դուք մարդու և նրա աշխատանքի մեջ եք խցկվում՝ մարդը աշխատանքից, աշխատանքն էլ մարդուց պիտի խռովեն, դառնանան: Ես իմ վաստակն այդտեղ ունեմ. իմ ավագ գործընկերների, իմ ժամանակակիցների հետ կարողացա ինքնիշխանության կրակը քիչումիչ արծարծել:

- Բայց ինչպե՞ս եղավ, որ գրաքննության ամենատես աչքից վրիպեց «Ահնիձորը» և տպագրվեց առանց կրճատումների ու շտկումների:

- Չէ, շտկումներ եղան: «Երեխաները» վերնագրով մի գլուխ կար, մի 10-12 էջ, հանեցին: Ինչքան փորձեցի հրապարակել՝ չթողեցին: Էդպես, առանց շտկումների չի: Բայց ասեմ, ակնարկ չէին կարդում: Տարօրինակ մի բան կար: Գործի միտումներն առհասարակ ուռճացնում, բացարձակում էին վերևները, իշխանությունները, որոնք ամեն մի անմեղ խոսք ակնարկ էին համարում իրենց դեմ: Իրենք բարձրացրին էդ աղմուկը, չնայած որ էդ ժամանակ Ռուսաստանի մամուլը գրեթե հեղեղված էր նման տիպի գործերով: Պրոբլեմը նկատված էր, Մոսկվան խրախուսում էր, իսկ մեր տգետները գոնե մոսկովյան մակարդակը չէին ապահովում: Եվ պատահականություն չէր, որ հետո էլ գավառում ինձ, Ռազմիկ Դավոյանին կամ մյուսին էստեղ մերժողներից Մոսկվան պիտի պաշտպաներ: Տարօրինակ է, չէ՞: Էստեղ Մարտիրոս Սարյանին պիտի ժխտեին, Մոսկվան պիտի գար, որ ահա էս հայ գեղագիտական մտքին, հայ պետական այրերին ասեր, թե ձեզանում գիգանտ է ապրում:

- Հիմա ես մի ուրիշ բան եմ մտածում: Ի՞նչ ահավոր աղմուկ սկսվեց «Ահնիձորից» հետո: Այսօր, ինչ խոսք, ոչ մի աղմուկ էլ չէր լինի: Ոչ թե այն պատճառով, որ նրա բերած մտահոգություններն այժմեական չէին լինի: Պարզապես ոչ ոք ուշադրություն չէր դարձնի, թե ինչ հարց ես բարձրացրել: Այն ժամանակվա աղմուկը և այսօրվա անտարբերությունը հասարակական հնչեղություն ունեցող հարցերի նկատմամբ: Դու ո՞րը կգերադասեիր:

- Սոլժենիցինը, երբ նոր էր արտաքսվել, ասում էր՝ էդտեղ ընթերցող կա, էստեղ՝ գրականություն: Էդտեղ ճնշում են, էստեղ ահա գրականությունը չի հետապնդվում, բայց ընթերցող չկա: Ես կգերադասեի, ահա, դարձյալ ազատությունը, որ մեզանում նույնպես եղել է և որի պայմաններում բարձրացել է Թումանյանը, մինչև 37 թիվը աշխատել են Չարենցը, Բակունցը, մյուսները: Շատ բախտավոր պիտի լինեի, եթե ինձ այստեղ չորս աչքով չնայեին, և ես

գրողի իմ համեստ գործն անեի: Եվ՝ որ սրված ուշադրության պայմաններում իմ գործերն աղավաղում էին, ինձ դարձնում էին խորամանկ, կամակոր, գործը ձևախեղում էին: Քեզ հիմա սիրելի մի հուշ պատմեմ: Մի անվնաս բան էի տպագրում «Գրական թերթում»: Նաև թերթի սրբագրիչն էի ու թողարկիչը: Թերթի էջը գնացել էր թույլտվության ու չէր գալիս: Իջա ներքև: Գրաքննիչը ինձ անունով չէր ճանաչում, ասավ. «Այ ախպեր ջան, էն երկու չարչարանքը քիչ էին, մի ուրիշն էլ է ավելացել»: Խեղճ ցենզորի էդ երկու չարչարանքը Պարույր Սևակն ու Գուրգեն Մահարին էին, երրորդը՝ ես էի գալիս: Մի քիչ շոյված եմ զգում հիմա, որ նրանց կողքին էին դրել իմ անունը, ցուցում տվել, թե էս երեքից զգուշացեք:

- Հետաքրքիր մի վիճակագրություն. առաջին գիրքդ՝ «Օգոստոսը», Հայաստանում տպագրվեց միայն 1967-ին, երբ Խորհրդային Միությունում և արտասահմանում տպագրվել էին քո տասնյակ գրքերը: Երկրորդը՝ «Ծառերը», լույս տեսավ 11 տարի անց: Թվում էր՝ ողջ երկրով մեկ հայտնի գրողի մուտքը Հայաստան արգելված է:

- Առաջին գիրքը 67-ից առաջ պիտի լիներ: Շարեցին ու շարվածքը թափեցին...

- Ո՞ւմ կարգադրությամբ:

- Իրենց մեջ: Ովքեր արեցին, երևի պիտի ասեին՝ Կենտկոմը, չգիտեմ: Մի կերպ, շատ դժվար, տպագրվեց: Մի խոսքով՝ դարձյալ Մոսկվան լայն դռներ բացեց: «Լիտերատուրնայա Արմենիա»-ում Ս. Աղաբաբյանը տպագրել տվեց «Մենք ենք, մեր սարերը», և մոսկովյան գրախոսություններն ինձ էստեղ իմոնց աչքում նկատելի մի բան դարձրին: Դրանից հետո վերաբերմունքը մի քիչ փոխվեց: Ես չէի շտապում երկրորդ գիրքը տալ: Գիրքը ինձ համար սրբություն է, չի կարելի հենց էնպես՝ հարահոս արտադրություն դարձնել: Ինձ շատ է դուր եկել մանավանդ Իսահակյանի էն դողդոջ ձեռքը, որ, է՛, 80 տարեկան, դեռ տեքստերի վրա շտկումներ էր անում, դեռ հին բաների վրա բառ էր ուղղում, տառ էր ուղղում: Մի խոսքով, «Ծառերը» ամբողջական մի գիրք չեղավ: «Մեսրոպը» դուրս էին գցել «Օգոստոսից»: «Բեռնաձիեր» շարքի մեջ էր, լավ տղերքը դուրս գցեցին, չնայած որ Մոսկվայում արդեն տպագրվել էր և «Դրուժբա նարոդովի» տարեկան մրցանակն էլ ստացել: Հայերեն «Մեսրոպը» առաջին անգամ դրսում է տպագրվել, Անդրանիկ Ծառուկյանի «Նաիրի» շաբաթաթերթում, 1969-ին: 77-ի գրքում դարձյալ դա և «Խումհար» վիպակը իմ կյանքը կերան: Էդ ժանիքավորները, որ դեռ կան հիմա, որ ետին թվով իրենց երեկվա հրապարակի

հերոս են տեսնում, չեն ասում՝ ինչ ենք արել: Գիրքը չորս տարի ուշացումով տպագրեցին: Զզվեցրին ինձ ինձանից, իրենցից, գրից ու գրչից: Դա ուղղակի նողկալի էր: Էդ ինչ արեցին: «Խումհարը» փչացրին: Էդ «Խումհարի» փաստն է, որ էդ տղան ինձ կսմիթների գրող է համարում: Մի գիշերվա մեջ 50 էջ կրճատել ու էդպես ուղարկել էին տպագրության: Փոխել էին գրքի շապիկը, թուղթը, գինը... Մի 78 կոպեկանոց գիրք հրապարակ բերին մի գիշերվա մեջ: Ես էլ նրանցից չեմ, որ ընկնեմ հետո նորից կցեմ-կցմցեմ:
Զզվելի էր էդ ամբողջ աշխատանքը:
- Երկհատորյակիդ մեջ չե՞ս վերականգնել:
- Չէ, չեմ կարողացել: Մուշեղը՝ սիրելի, սիրելի, սիրելի Մուշեղը, ձեռագրիս անգամ ստորակետին ձեռք չտալով, գիրքը իջեցրեց տպարան՝ ինքը գործից դուրս եկավ: Եվ նրանից հետո նրա գործը սկսեցին քննել: Ահա, նրա գործերի մեջ նաև ես էի: Գիրքս տպարանից ետ բերեցին ու քրքրեցին, հերն անիծեցին: «Մեծամոր» էսսեն, «Մեսրոպը» և «Խումհարը»: Սպանեցին ուղղակի: Ստիպված եղա «Մեսրոպից» հատվածներ կրկնել «Խումհարի» մեջ, ամբողջ կտորներ: Եթե դու չես թողնում, որ էստեղ ասեմ, ես մի ուրիշ տեղ այնուամենայնիվ կասեմ: Իհարկե, ազատությունն եմ նախընտրում, իհարկե, ազատությունը, իհարկե, թեկուզ անտարբերությունը, բայց ոչ այդ սրված, այդ թշնամական վերաբերմունքը:
- Եվ այնուհանդերձ, այդ գործերն իրենց նախնական տեսքով պետք է որ ներկայանային ընթերցողին:
- Թեկուզ և պռատ հրապարակվածից ավելի իմ անելիքը, չարածն ինձ համար ավելի թանկ է: Անցածին այլևս չեմ անդրադառնում: Ավելի լավ է՝ ուրիշ տեղ անեմ, ուրիշ մի բան անեմ, ուրիշ մի բան խլեմ անհայտությունից: Իսկ սրանք ինչ-որ չափով կան-չկան, կարծես ապրում են, իրենց մասին մի քիչ կարողանում են խոսել: Չէ, չեմ անի:
- Քո արձակն այն արձակն է, որն ամբողջությամբ ընկալելու համար նաև մակարդակ է պետք: Այս մակարդակը մեղադրելու տեղ չունե՞ր:
- Ես գիտեմ ինչ ես ասում, բայց համարիր, որ հազարից տասը մարդ այդ մակարդակն ապահովում է, և այդքանը բավարար է: Ազգի հինգ տոկոսն է թե տասը՝ դա անփոփոխ մեծություն է, որ գրականություն է ծնում և գրականություն է պահպանում: Ես նրա մակարդակին ոչինչ չեմ կարող ասել:
- Թույլ տուր հարցնել. այդ տասը տոկոսի մեջ քո ժամանակաշրջանի

գրականագետներին մտցնո՞ւմ ես, թե՞ չէ:
- Եթե իմ վերլուծության փորձը ես անեմ, մի քիչ երկար կլինի: Դա երևի համաշխարհային մշակույթի, քաղաքականության, պատմության աղավաղված տարբերակն է, որ ընկել էր մեզ մոտ: Պրոբլեմը էլի մարքս-լենինյան ուսմունքից է գալիս, որտեղ գյուղացիությունը դիտված է որպես բանվոր դասակարգի ընդամենը միայն դաշնակից: Մտավորականությանը չգիտեմ ինչ դեր էր տրված, բայց երբեք բանվոր և գյուղացի դասակարգերը հավասար վիճակի մեջ չէին, գյուղացիությունը ջախջախման էր դատապարտված: Հետո կոլխոզը, որ համայնական սեփականության ձև էր, նույնպես ջախջախվեց, որպեսզի գյուղացուն հողի վրա բանվորացնեն, սեփականազրկեն: Իսկ քննադատությունն էլ, որպես պետական հաստատության պես մի բան, իր ձեռքն ուղղել էր դեպի դա: Բայց երկրի հոշոտումն այնքան ակնհայտ էր, որ դատապարտելու կոչվածները գյուղագրությանը պաշտպան կանգնեցին: Այսինքն, հանձին գյուղի ու գյուղագրության, նրանք պաշտպանում էին հենց երկիրը, հենց հայրենիքը, հենց մարդուն:
- Ուրեմն անհրաժեշտությունը գիտակցելո՞վ էին անում:
- Ես ասում էի՝ էս երկրի վրա, էս Հայաստան աշխարհում, ահա, որտեղ բահդ խփեցիր՝ կարող է այգի դառնալ, որտեղ գրիչդ խփեցիր՝ կարող է երգ դառնալ: Յուրաքանչյուր խոնարհ աղջկա մեջ թագուհի է նստած, յուրաքանչյուր տղամարդու մեջ կտրիճ է նստած, մշակ, ստեղծող: Մի խոսքով, ինչպես որ Աստված բոլորի մեջ է, այդպես էլ յուրաքանչյուրն է արժանի ուշադրության ու հարգանքի: Ես ասում էի՝ ահա, ես գյուղը լավ գիտեմ՝ գյուղն եմ գրում, դուք էլ ինչ գիտեք՝ էն գրեք: Մեր կյանքը մարդ առ մարդ արժանի է գրականության: Գյուղի իմ տեղամասը անարժաններից չէ: Ես էս եմ գրում, դուք էլ ձերը գրեք, ես ձեզ չեմ խանգարում, դուք էլ ինձ մի խանգարեք:
- Վերջին վեպդ՝ «Տախը», «Խորհրդային գրող» հրատարակչության թեմատիկ պլանի համաձայն, տպագրվելու էր 1991 թվականին: Դեռ չկա: Ի վերջո լինելո՞ւ է: Եթե այո, ի՞նչ է բերում այն, ի՞նչ նոր կերպարներով կհամալրվի ծմակուտյան այդքան կենդանի ու գունագեղ պատկերասրահը:
- Ես էլ չգիտեմ ինչով կհամալրվի, ինչ կբերի: Գործը վերջացված չի: Փակվել գրում էի՝ Սումգայիթը պայթեց, երկրաշարժը և այլն: Մի քիչ բարձրագոչ կինչի, եթե ասեմ, որ էս ժողովրդի, էս կյանքի մարգարեն էի լինելու՝ հիմա դառնալու եմ ուղղակի սև տարեգիրը: Կյանքը ինձանից առաջ ընկավ: Անբարոյականությունը

կուտակվեց, կուտակվեց, ու ճայթեց ահա էս սև հեղեղը: Ահա էդ մասին էր գործը: Եվ էն տագնապների առաջ, որ էսօր մեզ համար ապական օդ են դարձել, էդ տագնապների առաջ էս երկրի որդին, որ մի քիչ ես եմ, երևի մի քիչ էլ դու և բոլորն են եղել - ահա, նա ուզում էր դառնալ բարոյականության էն կերպարը, որ՝ Իսահակյանի-Սահյանի խոսքով՝

Հոգնաբեկ ճայեր, իջեք ուսերիս,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

Պողոս Առաքյալ. «Ինձ եկեք, հոգնածներ ու բեկվածներ...»: Ահա, էդպիսի մի կերպար էի ձգտում ունենալ - կուզես Քրիստոս ասա, մարգարե կամ Դոն Կիխոտ... Գործը բավական արված է, շատ ջանք, տաղանդ ու գեղեցկություն է թափած, չի կարելի անավարտ թողնել: Հիմա պետք է որևէ կերպ վերջացնեմ: Դժվար է, շատ դժվար է աշխատելը: Մեկուսացում է հարկավոր: Իսկ մեկուսանալ կարենալու համար պիտի ուղղակի անասունի չափ կատարյալ լինես կամ մի մեծ իմաստունի չափ իմաստուն: Իհարկե, ուրիշ անգամ երևի ուրիշ կերպ արտահայտվեմ, թե՝ ականջներիցս էս աղմուկը երբ է անցնելու, աչքերս, որ էս ծանր պատկերները տեսնում են, երբ են մաքրվելու էս աղբից, թե աչքերս, ականջներս, ռունգերս... Վիլյամ Սարոյան. «Աղբն ինձ ուտում էր, ես երկար մաքառում էի, հետո հանձնվեցի»: Ես է՞լ եմ հաշտվելու...

- Այսօր Հրանտ Մաթևոսյանին ու նրա գրականությունը Հայաստանում ընդունում են անվերապահ...

- Չհավատաս:

- Ես նկատի ունեմ նաև նրանց, ովքեր չեն ընկալել քո գրականությունը: Դրանով հանդերձ՝ ընդունում են:

Դու նկատած կլինես, որ նոր ներկայացման առաջին տասը րոպեին թշնամանքով ես տրամադրված, և դերասանը, ռեժիսորը դա պիտի անպայման հաշվի մեջ վերցնեն: Դերասանն առաջին 10-15 րոպեին, ուրեմն, քեզ հետ գոտեմարտի մեջ է: Դու ե՞րբ ես հանձնվելու, նա՞ է քեզ գետնելու, թե՞ ինքն է տապալվելու: Փառք էն դերասաններին, որ կարողանում են 7-8-րդ րոպեներին դահլիճն իրենց բուռը հավաքել: Էդպես էլ գրողներին, ամեն մի նոր եկողի թշնամանքով են ընդունում. դու ո՞վ ես, որ իմ գլխին աստված գաս: Սա շատ բնական է: Է, Տերյանը քիչ էր՝ հիմի էլ դո՞ւ ես գալիս: Դու էդ ի՛նչ ես, որ ես իմ տնով-տեղով դառնամ քո երկրպագուն, քո ընթերցողը. դու ո՛վ ես, որ իմ գլխին մարգարե լինես, իմ ժամանակը խլես, իմ գրասեղանին ընթերցվող գիրք

դառնաս: Պիտի համարենք, որ սա կանոն է, որ այսպես բոլորս ենք բոլորիս (չ)ընդունում: Այդուհանդերձ, երբևէ կոտրվում է այդ վերաբերմունքի սառնությունը: Ու եթե ընդունեցին ու սպասում են՝ պիտի կարողանաս իրենց սպասելիքները անընդհատ արժանացնել աստվածային մեծ տեքստի առաջ ընթերցող ունենալուն: Թումանյանի քառյակը կարո՞ղ էիր ինձ հիշեցնել.

Ես էլ, ասենք, զարմանալի Ընթերցող եմ բախտավոր,
Որ կարդում եմ էդ երգերը էսքան հեշտ ու էսքան խոր:

Էդպես, Աստծու տեքստ կա, որի ընթերցողներն են մեզնից ամենաբախտավորները. երկնային էդ տեքստը նրանք ընդամենը քաղում են: Ահա, տա Աստված, որ էդ աշակերտը, ընթերցողը, էդ անընդհատ սովորողը լինենք:

- Լավ ընթերցողը քեզ ստիպում է միշտ քեզանից վեր բարձրանալ, և դա, անշուշտ, դժվար է:

- Դա սարսափելի է: Սիրո այդ վերաբերմունքին արժանանալուց հետո դա ուղղակի սարսափելի է: Փոքր վրիպումդ արդեն քեզ պիտի հրապարակից ամոթահար քշի:

- Կուզենայի, որ քո սիրած գրողների մասին խոսեիր:

- Չարենց: Մի լավ հատոր: Մի լավ հատոր՝ Թումանյան: Տերյան:

Օ՜, կըգան օրեր ավելի տրտում
Եվ դժնի, դժնի, առավել դժնի...
Կըլռե տրտունջն անամոք սրտում,
Եվ փոշու նըման ձանձրույթը կիջնի...

Ինչքան բառ է բերե՞լ... Ինչքան բառ է բերե՞լ: Նրա բերած ոչ մի հասկացություն չի չքվել, հետո թափանցել է ամբողջ հայ գրականություն: Չարենցն էլ է էդպես, Թումանյանն էլ: Ահա, էս՝ մերոնք: Թումանյան, Չարենց, Տերյան: Տոլստոյից սիրած գործեր ունեմ, մեկ-մեկ դառնում նորից եմ կարդում՝ «Կազակները», «Հաջի Մուրադը»: «Իվան Իլյիչի մահը» ահավոր զորության գործ է: Դոստոևսկուն սիրում եմ մտացի անդրադառնալ, իր տեքստերը չեմ սիրում, այլ տեքստից հառնող աբստրակցիան: Հներից նրանց, որ իմ պատանությունը լցրել էին, փորձեցի նորից անդրադառնալ՝ տեսա, որ ինձ է՛ն չեն տալիս, ես էսօրվա իմ գրասեղանի գիրք եմ ուզում: Ժամեր ունեմ, որ Թումանյանն էլ չի բավարարում, մի տեղ կա, որ Սուրբ գիրքն էլ չի լեցնում: Հոբի առակը նորից կգրեի, էսօր Հոբի վիճակում ենք: Չէ, Հոբի առակը նորից չէի գրի, նորից կթարգմանեի: Ահա:

Սարոյան եմ շատ սիրել ժամանակին, Հեմինգուեյ, Ֆոլքների պատմվածքներն եմ շատ սիրել: Մի խոսքով, էս գավառի հակամշակութային մթնոլորտում մեծացած պատանիս աշխարհի գրականության թեկուզ մանրիկ փշուրներով մեծ հագեցում եմ ունեցել: Բայց էսօրվա սեղանի գիրքը չունեմ: Չարենցն է դիմանում մի քիչ: Տեսա՞ր, քանի գիրք տպագրվեց էս վերջին տարիներին, ամենազորեղը դարձյալ Չարենցի սևագիր անտիպները մնացին:

Ատամնաթափ մի մարդ, գանգով կապկի,
Նստել էր մերկ կրծքիս - ինձ խեղդում էր:
Թույն էր թորում նրա շրթունքներից՝ դեմքիս-
Եվ անունը նրա «Քնքշություն» էր:

- Ահնիձորում՝ քո արարած Ծմակուտում, ապրել ու ապրում են քո գրած ու գրելիք ստեղծագործությունների նախատիպերից շատերը: Հաճա՞խ ես լինում այնտեղ: Ինչպե՞ս են ընդունում նրանք քո ստեղծագործությունը, գո՞հ են, թե՞ դժգոհ քո ստեղծած դիմանկարներից:

- Էդ հարցը 25 տարի առաջ էիր տալու՝ պատասխանեի: Նրանցից շատերը դեռ կային, և նրանց անմահությունը ես գուրգուրում էի: Գիտեի, որ մարդիկ են, որ մարդը անցվորական ա, այտա, գիտեի, որ պիտի անցնեն: Ուղղակի ամեն հեռացող ինձ կողոպտում ու գնում է: Նոր Ահնիձոր կառաջանա, չի առաջանա՝ չգիտեմ: Հա, էդ ինչպե՞ս եղավ, որ երեկվա իրենց մեջ ապրող մի տղա իրենց մեջ չոբան չի, մաճկալ չի, դարբին չի, այլ գնացել Երևան քաղաքում իր համար գիր է անում և դեռ իրենց էլ չի հավանում: Առհասարակ, էսպես, մուսուլմանի էս վերաբերմունքը կար. լուսանկարչական ապարատից դեմքը թաքցնել, գրքից խուսափել, գրողներին մատնողներ համարել... Էն ժամանակ «Մենք ենք, մեր սարերը» բավականին թշնամանքով էին ընդունել: «Ահնիձորն» էլ, որ իրենց մասին ու իրենց համար էր: Ֆիլմը տեսնելուց հետո վերաբերմունքը ջերմացավ: Պարզվում է՝ չէին կարդացել, լսել էին սրանից-նրանից: Է, գյուղացի մարդիկ են, ասում են՝ լավ, քեզանից ի՞նչ օգուտ: Ահա, ասում են, Հովհաննես Թումանյանը ետմահու իր գյուղի ճամփեն բացել տվեց, տեսնենք դո՞ւ ինչ ես անելու քո գյուղի համար:

- Եվ վերջին հարցս. զարմանալի է, բայց 1988-ից հետո շատ հաճախ եմ լսել նույն հարցը. «Ինչո՞ւ Հրանտ Մաթևոսյանը չի գալիս, ելույթ չի ունենում միտինգներին»: Կարծես թե Հրանտ Մաթևոսյանն իր ստեղծագործության մեջ չի ասել այն բոլորը, ինչ նրանք ուզում են լսել Անկախության հրապարակից:

- Ուրեմն, ժողովուրդը զուգված-զարդարված հրապարակի ցույցին էր գնում՝ խաչվեցին մեր ճանապարհները: Ասում էին՝ Շիրազը լիներ: Շիրազը կամ Պարույրը: Հիմա՝ նրանք չկային, ուրիշները կային. ոչինչ չկարողացան անել, չկարողացան խոսել: Վերջին հաշվով մեր արածը, անելիքը ի՞նչ է լինում: Մենք պե՞տք ենք, թե՞ պետք չենք, չգիտեմ: Գրականությունն ավելորդ մի բան է դառնում: Իհարկե, մեզանից յուրաքանչյուրը, մեծից մինչև մանուկ, պարտավոր է հանուն հայրենիքի, հանուն միմյանց, հանուն մեր ընդհանրության իրեն զոհաբերել, էդ մասին չի խոսքը, այլ էն, որ գրողն է ազգի աղը: Ազգի բովանդակությունը Հովհաննես Թումանյանն է, ազգը նրա շուրջն է ձևավորվում: Եթե ազգն իր օրվա հացը, ջուրը, օրվա քաջությունը, տքնանքը, քրտինքը, այսինքն՝ բոլոր հոգսերը հոգում է, դրանից հետո մի վերին բան էլ է ուզում, չէ՞: Էն վերջին պահակն էլ նստում, տեսնում ես՝ ծնկին է դրել, հայոց պատմություն է գրում - Թիֆլիս, Լոս Անջելես նստած: Մի ուրիշն էլ հայոց պատմություն չի գրում՝ «Անուշ» է գրում: Մեր էությունը գրի ենք տալիս: Ազգը մեզանով աստվածային իր բանն է փնտրում: Մենք ենք ստեղծում էն մթնոլորտը, որի մեջ ժողովուրդն ազգ է դառնում: Էս միջավայրը հայ գրողներն են ստեղծել, ազգային բովանդակությունն, ի վերջո, մեր արարումն է: Բայց մեր գրականություն կգա՞ մեր էս վիճակը... սրա խիզախությունը, թվում է, միայն Արևմուտքի «ավանգարդին» է հատուկ: Ասենք՝ Սալվադոր Դալին: «Քաղաքացիական պատերազմը» հիշո՞ւմ ես: Այլանդակ, հրեշավոր մեկը հրեշի իր մատներով մոր կուրծքը պոկում է: Ցավի մի զարհուրելի ճիչ է, չէ՞: Նրանք քաջեր են եղել, կյանքի հարցերին քաջաբար պատասխանել, հայհոյանքի են կապել նրանց, ովքեր քաղաքացիական կռիվ են սադրում ու երկիրը, իրենց ոտքի տակի հողը, իրենք իրենց ուտում են: Ահա, էդ վիճակների առաջ հազար անգամ մեր կյանքը կանգնել է, և դրա արտահայտիչները չենք ունեցել: Քաջ տղերք չենք եղել, խիզախներ չենք եղել: Դրա համար էլ գրիչ վերցնող յուրաքանչյուր նորեկի առաջին հերթին հենց քաջություն եմ ցանկանում, ճշմարտապաշտություն և խիզախություն: Առաջին հերթին՝ խիզախություն: Նման խիզախներ Չարենցն ու Թումանյանն էին:

Զրույցը վարեց Ֆրունզիկ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ
«Բանբեր», 05.04.1994 թ.